

լով՝ կրցած է ստուար հատոր մը ներկայացնել հասարակութեան:

Այ մէկ քանք ինչպիսիք է պատմութիւնն որչափ կարելի է իր առարկայական իրողութեան մէջ ներկայացնելու: Այս նպատակաւ ըստացած է Հեղինակը ժամանակակից աղբիւրներէ քաղել իր տեղեկութիւնները, առանց զանա առնելու նաեւ ներկայիս ուրիշ հեղինակներու գրութիւնները, որով կարելի է պայծառ լուսոյ տակ տեսնել ինքիդներն այդ կարեւոր շրջանին, ուր տեղի ունեցան թէ՛ քաղաքական եւ թէ՛ եկեղեցական ոչ աննշան դէպքեր: Ասոնց մէջ կարեւոր դեր ունեցած են նաեւ հայազգի բարձրաստիճան անձնաւորութիւններ, որոնց վրայ ընդարձակ կը խօսի Հեղինակը. Վարդան Տաճիկ զօրավարը (էջ 10) Լեւոն Ե. (813—820), որ եղած է գործունեայ բայց խստաբարոյ իշխան մը եւ որուն ժամանակ էն իր օժանդակութեամբը Պատկերամարտութիւնը վերստին արծարծած է եւ տեսած է գրեթէ 30 տարի (էջ 56) մինչեւ որ ժողովով մը վերստին Պատկերայարգութիւնը հաստատուած է (էջ 144):

Ե. Գլինոն մէջ ընդարձակ կը պատմուի Միքայէլ Գ.ի սպանութիւնը եւ Վասիլ Մակեդոնացոյն գահ բարձրանալը: Վասիլ ծնած էր Նայ ծնողքէ, որ Ադրիանուպոլսոյ շրջակայքը հաստատուած էր, եւ այս իրողութիւնն անտարակնելի է այսօր ընդգէժ անոնց, որ զինքը սլաւ կը համարին՝ յեղեալ արքայացի պատմագիրներու վրայ, առանց նկատի առնլու որ ասոնց բով Սլաւը հաւասար է Մակեդոնացոյ (էջ 165): Հետաքրքրական է այս մասին ժողովարարի մէկ կեղծ գրութիւնը, որով իւր թէ կայսրը Արշակունեաց ցեղէն սերած ըլլայ (անդ եւ ծան. 4):

Այլեւայլ շրջաններու եկեղեցական պատմութիւնն ալ միացուցած է Հեղինակը աշխարհական պատմութեան, եւ այն ոչ թէ հարեւանցի կերպով, այլ հիմնական: Ընդարձակ կը պատմէ Իգնատիոս Հայրակապանի եւ ժողովարարի ինգիրը (Գլ. 3), ուր թէեւ կ'աշխատի իրողութիւնը որչափ կարելի է առարկայօրէն նկատել ու պատմել, բայց ինչ գտնուի նաեւ ոչ ճիշտ նկատուիներ Եկեղեցոյն եւ Հռոմիայ քահանայապետին ինչ ինչ գործերուն նկատմամբ:

Գարձեալ անտես առնուած չեն ժամանակին ելեւմտական ու զինուորական հանգամանքները (Գլ. 1), արուեստները, գիտութիւններն ու կրթական կացութիւնը (Գլ. 3-րդ): Հոս կը

չնշտէ Հեղինակը Նայ քաղաքացիները, ոչ միայն քաղաքական, այլ նաեւ ընկերական կենաց վրայ:

Անցնելով այնուհետեւ Արեւելեան Հռոմեական կայսրութեան արտաքին իշխանութեանց հետ ունեցած յարաբերութեանց, կը պատմէ Ստրակինոսի պատերազմները, ծանրանալով Միքազելի վրայ վաճառականական, արուեստագիտական եւ անտակէտէ (Գլ. 2): Բուլգարական թագաւորութեան նուիրուած է Ժ.Վ. Գլուխը, այսինքն՝ թէ ինչպէս Կ.Պոլիս պաշարեցին, իսկ ԺԲ. Գլխոյն մէջ կը խօսի ասոնց ու սլաւներու ի քրիստոնէութիւն դարձին վրայ (Գլ. 3-րդ): Խաղաղները, Ռուսներն ու Հունգարացիներն ալ նկատի առնուած են իրեւ մերձաւոր ազգեր (Գլ. 1-րդ): Հասարակ վերջը կան բազմաթիւ յաւելումներ պատմութեան կարեւոր կէտերու անգրագոյն քննութեան համար, որուն միծապէս պիտի նպաստէ նաեւ յառակից ճոխ Մատենագրութիւնը:

Հ. Մ. ՍՐԱՊԵՃԱՆ

Ա. Պիգլիճեան Յուշարժան Մ. Պէշկիթաշլեանի, մեր քանդատողին կէսերն ու գործերը Կ.Պոլիս 1914, էջ 210:

Դանտեի գրադէտ դէմքերէն մին Ա. Պիգլիճեան, սոյն գրական երկն ի լոյս ընծայելով յատկապէս մտադրութիւն ունեցած է ընթերցող հասարակութեան ուշադրութիւնը հրահարել քառասնամյա թուականներու տաղանտաւոր մէկ բանաստեղծին վրայ՝ Մ. Պէշկիթաշլեանի: Չըսեմ թէ ցայժմ անտես եղած էր այս մեծ դէմքը, բայց անոր գրականութեան ու եռանդուն գործունէութեան թէ հայ գրականութեան եւ թէ ազգային ընդհանուր շարժման եւ կենանքի վրայ բրած ազդեցութիւնը այնչափ մեծ ըլլալուն՝ որչափ ուսումնասիրուի այն, այնչափ աւելի նոր լուսոյ տակ կը ներկայանայ անոր կենանքն ու նկարագիրը:

Յարգ. հեղինակն, ցայտուն գրով մը կը ներկայացնէ գլխաւորաբար Մ. Պէշկիթաշլեանի կենսագրականը, անոր գործերականութիւնն ու գործունէութիւնը: Բաց աստի հասարակ մէջ հիւրընկալած եւ ի մի ամփոփած է նաեւ բանաստեղծին սպուած ու անտիպ մէկ քանի տաղերը. միով բանին ժողովրդական սիրուն գրուածք մըն է մասունքն, եւ վստահ ենք թէ յօժարութեամբ պիտի ընթերցուի ամէն անոնցմէ, որոնք կը փափաքին ընդհանուր պայծառ գաղափար մը կալմը Պէշկիթաշլեանի կենանքն ու գործունէութեան վրայ:

